

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

VII դասարան

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Լրացնել բաց թողած տառերը.

Թ__պամած, կորնթար__, ալպ__ան, սա__սոուն, եր__նագույն, կեցվա__ք, արհամար__ել, ա__բիծ, դիցու__, արևազ__ծ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով.

տեղի (անտեղի), ի (նշան), երեսուն (հինգ), ձեռք (սեղմում), բաց (վարդագույն), շիփ (շիտակ), տան (տիկիւն), ըստ (իս), մաս (մաքուր), ծովից (ծով).

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ.

մարտ	սենյակ
գիր	դաշտ
դաս	սեղան
ծաղիկ	կարմիր
դեղին	թերթ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան բառերով կազմել ածանցավոր բառեր.

դժ	գահ
թեր	կարգ
ենթ	աճ
ան	գոհ

ապ վախ
նախ ուշ

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը.

ջուրը գցել	իրար օգնել
սպիտակ դրոշ բարձրացնել	անօգուտ վատնել
թիկունք թիկունքի տալ	համառել
կողի ընկնել	դրդել ըմբոստանալու
ոտքի հանել	հանձնվել

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 6.Առաջին շարքի արմատներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր.

հյուր ու
ագդ անոց
ել կան
վարձ ույթ
մանր ուք

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 7. Ընդգծել այն բառը կամ բառակապակցությունը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը.

ա/ (խոզ) – անտաշ, կատաղի, փնթի, հսկա
բ/ (կրիա) – ստորաքարշ, դանդաղաշարժ, նենգ, հնարամիտ
գ/ (սոխակ) – լավ ձայն ունեցող, երես առած, խիզախ օդաչու, անբան
դ/ (շուն) – անխելք, ուրիշի խոսափող, պճնամոլ, հավատարիմ
ե/ (եշ) – արագաշարժ, խորամանկ, համառ, լեզվանի

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 8. Կապակցությունների իմաստ արտահայտել մեկ բառով.

ա/ Մեղունների խումբ _____

բ/ Առյուծի ձագ _____

գ/ Բերք տվող _____

դ/ Ամեն ինչ ուտող _____

ե/ Միջին դարեր _____

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր.

ա/ Զորք _____

Երկրաչափական մարմին _____

բ/ Տուրք _____

Բարձր շենքի՝ մեկ հարթության վրա գնտվող սենյակների ամբողջություն _____

գ/ Օգուտ _____

Արևելյան թագավոր _____

դ/ Դրամանիշ _____

Խողովակաձև մաս _____

ե/ Ձեռքի թաթի ներսի մաս _____

Ցամաքի՝ ջրին հարող եզր _____

ԱՌԱՋԱԴԴԱՆՔ 10. Տեղադրել *ուղտ, խոշոր, խոժոռ, ուխտ, գինարբույ* բառերը.

1. Նա _____ հայացքով նայում էր հարևանին:

2. Նա _____ ձեռքերը միշտ պահում էր վերարկուի գրպաններում:

3. _____ քարավանը դանդաղ շարժվում էր անապատով:

4. Վասակը իսախտեց Վարդանի հետ կնքած _____:

5. Պարտեզում ծաղկել էին հոտավետ _____: